



Diocese of the Armenian Church of America

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ

630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016

MURRAY HILL 6-0710

ՄԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆ
Առաջնորդ

Archbishop Sion Manougian, Primate

Թիւ 18081
Մայիս 31, 1966

Արժանաշնորհ
Տ. Գրիգոր Քհնյ. Հայրապետեան
Հոգեւոր Հովիւ Ս. Յարութիւն Նկեղեցւոյ
եւ Սախազահ Պատուարժան ժխական Խորհուրդի
Ստուծ Միւլիբի.

Սիրելի Տէր Գրիգոր,

Ստացած ենք Ձեր 1966 Մայիս 26 թուակիր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ Յունուար 16ին զումարուած Ձեր ժխական ժողովին մէջ կատարուած է ժխական Խորհուրդի մասնակի ընտրութիւնը, եւ ներկայացնելով քունէարկութեան արդիւնքը, կը խնդրէք ընտրուած անձերուն վաւերացման պաշտօնադիրը:

Նկատի ունենալով որ Ձեր ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, եւ ընտրութիւնը կատարուած է ըստ օրինի, այսու կը վաւերացնենք ճշտեւեալները իբրեւ անդամ ժխական Խորհուրդի:

Տիրք՝ ներսէս ներսէսեան
ժէրի Քէշիշեան
Նազար Պալեան
Երուանդ Տէրտէրեան (Պարսամ Պարսամեանի տեղ)

Կը յանձնարարենք որ այսուհետեւ Ձեր տեղեկագիրը Առաջնորդարան ղրկէք ժխական ժողովէն անմիջապէս ետքը:

Օրհնելով ժխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք Ձեզի եւ Ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Նկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն Ձեր համայնքի մեր սիրեցեալ ժողովուրդին:

Մնամք Տիրաւանդ սիրոյ ողջունիւ
Աղօթարար

ՄԻՈՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ Հայոց Ամերիկայի
եւ Գանատայի